ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

«ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով կրթական օբյեկտների հիմնանորոգման և բարելավման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 04.09.19թ. ժամը 10:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Աղայանց /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Գրիգորյան /գնահատող/

Ա. Բաղդասարյան /գնահատող/

Հ. Մարտիրոսյան /բացող/

Խ. Գևորգյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Թաշչյան

Հայտերի բացման և գնահատման մասին

1. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

1.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. հասցեները
1	<<Համաշիննախագիծ>> ՍՊԸ	hamashin@mail.ru
2	<<ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ>> ՍՊԸ	globalengineerllc@gmail.com

2. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

4.1 <<Համաշիննախագիծ>> ՍՊԸ-ի և <<ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

5.1 Մասնակիցների ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Չափաբաժին	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները			
		<<Համաշիննախագիծ>> ՍՊԸ		<<ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ>> ՍՊԸ	
		Առաջարկված գները, ՀՀ դրամ			
		առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	**28 300 000**	19 990 000	19 990 000	22 200 000	22 200 000

6. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

6.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը.

Առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Համաշիննախագիծ>> ՍՊԸ-ին;

Երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ>> ՍՊԸ-ին;

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

7.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 6-րդ մասով ընդունված որոշումը՝ շարունակել հայտերի գնահատման գործընթացը ARMEPS համակարգով՝ էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան:
7.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերի II մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը և վերջինիս վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից համապատասխան եզրակացությունը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ժամը 10:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Աղայանց /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Հ. Գրիգորյան /գնահատող/

_____ Ա. Բաղդասարյան /գնահատող/

_____ Հ. Մարտիրոսյան /բացող/

_____ Խ. Գևորգյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ա. Թաշչյան